600.0103.29.03.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մարտի 2017 թվականի №103Ա
քաղ. Երևան

«ՔՈՆԹՈՒՐԳԼՈԲԱԼ ՀԻԴՐՈ ԿԱՍԿԱԴԻ (ՈՐՈՏԱՆ) ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԶԻՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով 2016 թվականի դեկտեմբերի 20-ի Հայաստանի Հանրապետության կառավարության և «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքված փոխառության պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ առ այն, որ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը հնարավորություն է տվել փոխառություն ստանալ «Մայնի Ֆրանկֆուրտի Կրեդիտանշտալտ Ֆյուր Վիդերաուֆբաու» կազմակերպությունից (այսուհետ՝ Կազմակերպություն) «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադի (Որոտան) Հիդրոէլեկտրակայանների վերազինում» ծրագրի իրականացմանն ողղված 51 000 000 (հիսունմեկ միլիոն) եվրո գումարի չափով, որոնք կհանդիսանան Հայաստանի Հանրապետության կառավարության միջնորդությամբ ստացված արտոնյալ վարկային միջոցների հաշվին իրականացվող ներդրումներ և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադի (Որոտան) Հիդրոէլեկտրակայանների վերազինում» ծրագրի իրականացմանն ողղված ներդրումային ծրագրի շրջանակում ներգրավվելիք միջոցների՝ Կազմակերպության կողմից 51 000 000 (հիսունմեկ միլիոն) եվրո գումարի

չափով տրամադրված վարկի, Ընկերությանը գումարների վերադարձը կապահովվի էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության սակագնի հաշվարկում դրանց սպասարկման և մարման ծախսերը ներառելու միջոցով՝ ըստ Պայմանագրում ամրագրված պայմանների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
29 մարտի 2017թ.
ժամը 16[00]